


ԵՂՈՒԱՐԴ ԽՈՃԻԿ
ՏԵՐ ԲԱՐՍԵՂ



891.99

Դ-68

891.99

Խ-68

ԵՂՎԱՐԴ ԽՈՋԻԿ

1346

ՏԵՐ ԲԱՐՍԵՂ

31
37

ԱՌՍԿՆԵՐԻ ՅԵՎ ՅԵՂԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
Ժ Ո Ղ Ո Վ Ա Մ Ո Ւ



ԵՂՎԱՐԴ ԽՈՋԻԿ — ՅԵՂԵԼՈՒԹՅՈՒՆ. — ԹԵՐԵՎԱՆ, 1930

Բ Ե Ր Գ Ա Ռ Ա Տ

Տեր Բարսեղը մորուք ունի փառավոր,
վոր իջնում ե մինչև փորը՝ մեծ-կոր...

Ամռան մի որ պատարագին,
յերկար մորուքն առած ափին,
Տեր Բարսեղը ժողովրդին,
վոր գլխիկոր, լուռ կաղոթեր,
քարոզ ասաց՝

— Ասավածասեր
այ ժողովուրդ.

Քրիստոս ասաց.

Հովիվ քաջ, դնե չուր աջ,

ի վերա չուր վոչխարաց.

յես ձեր հովիվ,

դուք իմ վոչխարք.

յես պիտ հոգամ

ձեր դարդ ու ցավք:

Ամառվա ծեգ, շոգ որերին,

մոռանում եք ստեղծողին.

զոր ու գիշեր շարունակ,

հա ձեր վարը,
հա ձեր ցանքը,
անասուններն

ու արտը...

Մեր տեր աստված գթառատ,
կտա նրան բերք առատ,
ով շատ կտա, կաղոթե,
մոմ կվառե իրա դեմ.
Իսկ չերբ կգա ցավ, կարկուտ,
եդ աստվածն ե բարկանում...
Լուսաբացին ամբողջ գլուղով
չեխենք դաշտ,
անենք մաղթանք, աղոթք աղերս,
պատարագ,
վոր դեպի մեզ չերկնքի աչք
լինի հաշտ...
«Մարդ վոչ միայն հացիվ կեցցե,
այլև բանիվ տյառն»...
Հասկացա՞ք...
Իսկ ձմեռվա իմ փայլ դառն,
աննշան,
է, շատից՝ շատ,
բչից՝ բիչ,
անպայման,
կամբարեմ,
վոր ուտեմ—

ու ձեզ համար աղոթեմ.
չէ՞ վոր յես ձեր հովիվն եմ:

Ընթերցող,

բարկացող թե ծիծաղող.

մի ձանձրանա տերտերի ես
ձիգ ճառեն.

մեր տերտերը շատ լավ գիտե
իր չարեն.

ճառի կեսի չափ աղոթե՝
կանձրևե.

շուռ տա Սաղմոսի թուղթը՝
կղազարի կարկուտը.

ու կլեցվի առատ բերք
դաշտում, գլուղում, ամբարում,

— Ո՞ւմ:

— Գլուղացի...
— Չը հավատաս...
— Տերտերի՞...
— Բնս...

Մ Խ Ի Թ Ա Ր Ո Ղ Ը

(Առակ)

Տեր Բարսեղը ամագ չերեց
մեծ մեղքերից մեզ վնց փրկեց...

Անցյալները առավոտյան,
գնաց նրան այցելութեան
մեր հարևան վորքեայրի
խեղճ Մարթան՝
թողութեան.

— Տեր հայր,
սուրբ հայր,
ինձ ներիր,
մեղավորիս
դու փրկիր:

Գարնան գալուն հետ միասին,
չերագներն ինձ պաշարեցին.
ամեն գիշեր իրար վրա,
լուսահոգի կողակիցս
ինձ այց կուգա

ու կերթա...

Անցյալ գիշեր... ո՞ք մեղա,
մեղքի մեջ չես կորսվա.
չերագումս նրա հետ
պառկած էլինք իրար հետ
ու... ամաչում եմ—թե ասեմ...—

Մեղա, չես մեղավոր եմ...—
— Ահա թե ի՞նչ, այ Մարթա.
եղ քո մեղքը—շատ բարդ ա.
չարի դեմ շատ անկամ ես,
համ ջահել ես, համ խամ ես.
դու զուր ինքդ քեզ քցել ես
մեղքերի մեջ
ծանր ու մեծ...

Մեկ գլուխ սպասիր՝
սաղմոս կարդամ.

քիչ խունկ ծխեմ,
որհնած ջուր տամ:

Յերեկոյան ել—մթնի,
կգամ քեզ մոտ չես այցի.
ու չար վողին դուրս կանեմ,
ու չարը կխափանեմ...

Ընթերցող, գլուխդ մի շարժի,
իմ առակը շինծու չի,
զարմանալի բան չունի.

դե՛ տեր հայր ե, սուրբ հովիվ,
խսկ մեր Մարթան մենակ կին,
գիշերը չա՛ր, նա վախկոտ,
տերտեր չըն՛ի նրա մոտ,
մխիթարի՛, պահպանի՛
ու չար հոգին խափանի...

Ո Ի Ն Տ

(Առակ)

— Ե՛յ, Ոհան ախպեր,
է—հե՛յ, վոչխարներ
չը պատահեցի՞ն
քեզ ճանապարհի՛ն,
չը պատահեցի՞ն... —
— Չե՛, պատահել չեն,
պատահել չեն, չե՞ն...
Եսպես խեղճ Մաթոս
յերկար փնտռում ե
իր վոչխարներին,
վոր որ—կես-որին
կորսվել ելին:
Գլուղում չեր գտել,
ու դուրս եր չեկել
դեպի կալ—բոստան...
Ու չկան, չկան:
Ով անցնում դառնում,
հարցմունք եր անում:

— Ձը պատահեցի՞ն... —

— Ձե՛ն պատահել, չե՛... —

Մութը կոխում է.
ու հուսահատված,
գլուխը կախած,
կանգնում է տրտում,
ասածուն հիշում.
ձեռքերը կրծքին,
աչքերը հառած
մթնող յերկնքին
կանչում է.

— Յերկնք,
նվ աստվածածին.
Ել, քեզ եմ դիմում,
Ել, հուշսս դու լես.
անխ, վոչխարներս
թե վոր դու գտնես,
յերկու մեծ կերոն
ինձնից քեզ փեշքեշ
չաղ աքլոր ունիմ,
դուռդ կբերեմ,
քեզ մատաղ կանեմ.
միայն թե խնդրեմ.
կորուստս գտիր,

ու հենց վոր գտնես... —

Դեռ խոսքը բերնում.
մարգերում խշշում,
ու վոչխարները
պուպուկ՝ առաջը...
Մաթոսը ուրախ,
բռնում է արագ,
կանչում է.

— Մատկեք,
ես ուր եք կորել,
թե կուշանալիք
յերկու վաչրկան ել,
պիտ խոստանալի
յես աստվածածնին
մեծ կերոն յերկու

ու մեր՝ աքլորը՝
չաղ, դառւրմացու...
Լավ պրծանք,
գնանք:

Սուտ սրբերին խաբելը
հին որենք է, հին կարգ է.
հալք սուրբ լինի, թե Մաթոս՝
մի հաշիվ է, մի կարգ է:

ՎԱՌՎՈՂ ՍՐԲԵՐ

(Առակ)

Որերն անցան իրար վրա.
անձրև չկա...
արտ ու այգի,
բանջարանոց,
մարգագետին
չորացել են— դեղին-դեղին:
Ու փոշ գյուղը վճիռ հանեց.
յեկեղեցում հսկում անել,
մատաղ մորթել, փող դրստել,
Տեր Բարսեղի բուռը լցնել...
(եղ գյուղը շատ տգետ եր):
Տեր Բարսեղիս գործը լավ եր.
լցնում եր իր գրպանը
ու կարգում եր՝ շարականը...
Ժողովուրդը գլխիկոր
ազոթում եր
ու մուր
համբուրում եր

գետին, խալի,
կարպետ, պատի,
ու սրտալի
ազոթում եր՝
տանը, գոմում, դաշտում անձար,
իսկ անձրևը չկար, չկար...
Մոմ եր վառում,
ու խունկ ծխում՝
բայց անձրևը չկար, չկար...
Հանկարծ տան մեջ վառած մոմից
հրդեհ ծագեց.
եղ հրդեհից
յոթ տուն վառվեց.
ու դրանց մեջ
յեկեղեցին՝
սրբերի հետ...
Տեր Բարսեղը խաչը ձեռին,
ամենակալ մեծ սրբերից
ոգնութուն եր աղերսում,
փոր չվառվեն,
փոր փրկվեն...
Բայց կրակը լափեց «անբիծ»
յեկեղեցին
ու «սրբերին»:
Ու խանձվեց Տեր Բարսեղի
սուրբ մորուքը:

ան մորուքը
սուրբ ու արդար,
մինչ նա մոտիկ ազոթում եր,
վոր սրբերը
փրկեն իրենց ու չայրվեն.—
— «Տիրոջ համար»:

Տեր Բարսեղի ցամքած բուկին,
քաղցած փորին-կես մորուքին,
մոխիր դարձած թղթե սուրբին...
հավտացողին մտքին, խելքին
չծիծաղեմ,
բա ի՞նչ անեմ...

ՏԵՐ ԲԱՐՍԵՂԻ ՄՐՏԱԿԻՑ ԸՆԿԵՐԸ

«Սուրբ» Մելիֆոն աղան

Մելքոն աղան վողջ գյուղումը
հայտնի չեր.

աստվածավախ, աղոթասեր,
կարգացող ու թուղթ-գիր անող,
սրբերի հետ գործ ունեցող...

Առավոտից մինչ իրիկուն
կարգում եր՝ ավետարան ու սուրբ
գրքեր.

չերգում եր՝ վողբ շարական ու
սուրբ չերգեր...

Հայտնի չեր...

Ու դառել եր նրա տունը
սրբատեղի

եղ շրջանի մեծ ու փոքր
գյուղերի:

Աղոթում եր,
բժշկում եր,
վախը բռնում,

Հար-խափանում,
Թուղթ-գիր անում...

— Սո՛ւրբ ե, սո՛ւրբ ե Մելքոն քեռին,
կարժանանա ասածու տեսքին... —
ասում եյին գյուղացիք,
խաչակնքում,

աղոթում,
ամաններով բերնից-բերան
նրան բերում՝

պանիր ու յեղ,
մեղր ու կարագ,
մածուն, մերան...

Ու ապրում եր Մելքոն քեռին՝
իր քեֆին,

չեքազում եր— չերկնքումն ել՝
մեծ սրբերի դասը ընկնել...

Ու գյուղացի ջահելներ
վճռում են «սուրբ» Մելքոնին
իր մուրազին հասցնել...

Հավաքվում են Մելքոն աղի
կուռրին

ու չերթիկից ներքև նայում,
ի՛նչ տեսնում:

Մելքոն աղան սովորության
համաձայն
չոքած բարձին,

ավետարան բռնած ձեռին,
աղոթում ե, խաչակնքում,
շուտ-շուտ կրկնում.

— Տեր դասյա զիս ի սրբոց քոց,
տեր, դասյա զիս ի սրբոց քոց... —
Համբարձել ե, ասես չկա

Մելքոն աղան,
ենքան տարվել, կորցրել ե
ինքն իրան...

Ջահելներից մեկը մեկ ել
շատ խուլ ձենով.

— Վորդյակ Մելքոն, շուտ արի, չե՛ր
դի դասյալ ես դասս սրբոց... —

Մելքոն աղան անակալած
կորցնում ե իր ունեցած
խելքի մասն ել

ու կանչում.

— Վո՛չ,

արժանի չեմ, ի սրբոց քոց...

Վո՛չ, վո՛չ...

Վո՛չ, վո՛չ... —

Իսկ ջահելը միշտ նույն ձայնով.

— Ով դու, Մելքոն,

դի վոչ կարես հակառակել,
պիտ համբարձես... —

եղ ժամանակ մի հաստ թոկ

1346

15
103



ողակ արած գցում ե ցած.

Մելքոն աղին մեջը առած

կամաց-կամաց,

բարձրացնում են դեպի լերկինք...

Մելքոն բիձեն թե բարձրանում,

թե անընդհատ խաչակնքում

ու կրկնում ե.

— Տեր, դու փրկյա,

սուրբ կոչվելու վոչ եմ արժան,

տեր, քեզ մեղա,

չես սո՛ւրբ չեղա...

եդ ժամանակ կտեր վրից

ջահելները

վորպես թե սուրբ, լերկնից իջած

հրեշտակներ,

լերգում են մեղմ շարականներ՝

— Համբարձում յայլա,

Մելքոն նորընծա,

շո՛ւտ արի լերկինք՝

չաշխատինք, ապրինք...

Յեկ, չեկ, Մելքոն աղա,

չեկ, չեկ, բանդ աջ ա՛...—

Մելքոն աղան այս ամենը չի լսում,

միայն գիտե, վոր լերկինք ե

բարձրանում,

ու կրկնում.

— Տեր, քեզ մեղա,

չես սո՛ւրբ չեղա...

Մելքոն աղին հասցնում են լերթիկին

մի մեծ փարչով լի մածուկը

լցնում գլխին, քիթ ու բերնին.

ու մինչ շրից, սառնությունից

ուշքի կգար,

իջեցնում են ելի ցած...

Մելքոն աղան հիմար ե,

հիմար ասենք՝ դեռ քիչ ե.

ես խաբեբա տխմարին

«սուրբ» ասողը բա լո՛ւնչ ե...

ԽԱԹԱ-ԲԱԼԱ

(Յեղեղուքյուն)

Բանվոր Մարգարի
կին Սաթենիկը
առջի գիշերը
պառկեց
ու ծնեց
և աշխարհ բերեց
աղջիկ ու աղա:
Հուրը շատ շուտով
տերտերն իմացավ.
— Յերկուսը մի տեղ,
ե՛ֆ, քսվեց հացիս
առատ մեղր ու չեղ...
Յերկու կնունքի
փողը ինչքան է...
չէ, բանս ա՛ջ է... —
Ու քե՛ֆն եսպես չաղ,
կանչում է նա խաղ,
պաստում՝ ես ա

մեկը կերևա,
երեսն կկանչի,
վոր գնա կնքի...
Մեկ էլ քիթը կախ,
քաշելով ախ-վախ,
տիրացուն.

— Ա՛ տեր.

վայ՝ մեր ապրուստին,
վայ՝ մեր արևին,
մեր աստղը թեքվել,
մտել է գետին.
Մարգարը իրա
յերկվորյակներին
կնքել է թագա
կարգով ու ծեսով,
նոր, խորհրդային
վարքով ու բարքով...
Բա սնունդները
ինչե՛ր է դրել.
մեր սրբերի մեջ
սկի չի չեղել...
աղին կոչել է՝
ինչ վոր Հոկտեմբեր,
(ախ դու ծուռտիկ ուղտ)
աղջկան կոչել՝
Հոկտեմբերիդուխտ.

ոյ, աման, աման,
փողերս կորան... —
Տերտերը մթնեց.
— Ե՛, փողերը մոռացա,
դարդս հիմա շատ մեծ ա.
դարդերիս ել ճար չկա...
դարդ, ել ի՞նչ դարդ,
մի խաթա.
եդ հոկտեմբերն ու դուխտը,
եգուց չեթե մեծանան,
ել կրոնեն մեր բուկը,
ել վո՞նց անես, վոր ապրես.
ցավը ես ե, դարդը՝ ես:

ԴԱՐԴ ՈՒ ԲԱՆԱ

Բանվոր Մարգարի
կինը ամեն որ
տանում եր խեղճի
գլուխը...

... — Ինչի՞.

— Այ մարդ, անկնունք
չեն ապրի չերկար.
այ, եդ են ասում
տնով տերտերանք.
մեղք են, կմեռնեն...
Ա՛յ, ինչ եմ ասում.
մեր սանահերանք.
իրենց չերեխան
կնքելու տարան
հենց ես կիրակի... —
— Մեզ որինակ չի.
դու հանգիստ չեղի...

Մեկ ել հե-հեի
սանհեր թորոսը՝

— Վայ, աման մեռան...
— Ի՞նչ կա, ի՞նչ չեղավ...
— Սև ու սուգ չեկավ.
Թոփի պես տղաս
մի որում մեռավ...—
— Մեռավ, քո տղան,
եղ ի՞նչպես չեղավ...
— Ա՛խ, մի՞ք հարցնի.
մորս լսեցի,
կնքելու տարա
չես չեկեղեցի
ձմռվա կիսին,
ձյուն ալամաթին...
Իսկ չեկեղեցին
սառցատուն լիներ,
շարականները՝
ավետարանի
մի մի գլուխներ...
Սառը ավազան,
ջուրը իր նման.
չերեխաս մրսեց՝
տուն բերինք հիվանդ:
Դրանից հետո
մի շաբաթ չապրեց...
Վայ աման, մեռան,
Թոփի պես տղես
կնունքից մեռանվ...

ՏԵՐ ԲԱՐՍԵՂԻ ՎԻՃԱԿԸ ՄԵՐ ՈՐԵՐՈՒՄ

Գեղամիջում շտապ-հավար,
հավաքվում եր
Տեր Բարսեղի
փայլ ելի.—

Հավկիթ ու չեղ,
գառներ անմեղ,
պանիր, գարի,
հավ ու ձուտեր,
ձուտ ու գոճի,
ցորեն ու մեղր:

Գեղամիջում շտապ-հավար,
հավաքեցին եսքան ավար...
.....
... Ու վողջ գլուղը հավաքվել,
խիստ վեճի չե բռնվել:

— Ա՛, ես ելի տերտերին

պիտի տրվի,

եղ ինչի...

— Բա եսպես ել

բան կըլի՞.

Վոչ աշխատի, քրտինք թափի,
ինձնից, քեզնից առնի, ուտի՞...

— Ժողովուրդ,

յես կտամ ձեզ

մի խորհուրդ.

հավաքված ես դառները,
պանիր, գարի, ճուտերը,
ել ինչո՞ւ տալ տերտերին.
յեկեք հանձնենք դպրոցին...—

— Լավ ասացիր,

բայց թե մին

մտիկ արեք իմ խոսքին.

դպրոցը կա,

կմնա,

յեկեք ավարի գնով,
փառքով, շուքով ու շախով
հիմնենք մի տեղ,

մի կուրբ.

դա, հավաքվի խայխը մեր,

խոսի, կարգա դիրք, գագեթ.—

— Ճիշտ ե, ճիշտ ե, —

— Ճիշտ ե, ճիշտ.—

— Դպրոցին ե, դպրոցին...

— Ձե, գրքերին...

Են կողմից՝

հարուստ Ափուն

ձայն ե առնում ու խոսում.

— Ձեր հոգուն մեղք եք անում.

դժոխք կընկնեք կվառվեք.

ուշքի չեկեք, համոզվեք,

զուր ե ձեր «հա»-ն ու «վոչ»-ը.

տիրոջ փալը՝ տիրոջը,

դպրոցինը՝ դպրոցին...—

Ո՞վ կլսեր կուլակին,

մեր գլուղացին լավ գիտեր

ճիշտն ու սուտը,

իր ոգուտը:

Ու են կողմից մին ել մեկը.

— Ես հավաքած մեր ավարը

յեկեք հանձնենք «Անաստվածի»

աերոպլանին,

մենք ել փառք նստենք միջին,

գնանք քաղաք

արագ, արագ,

բերենք ապրանք,

զիրք ու նամակ.
Թռչենք վերև, դեպի յերկինք.
հյուր կլինենք մեր սրբերին.

առանց յեղի
ու հավկիթի,
արժան կըլնենք
սուրբ գրախտին.
հա՛, հա՛, հա՛, հա՛...

— Հա՛, հա՛, հա՛, հա՛...

— Գալիս ե, հա՛,

աերոպլանին: —

— Վողջ ավարը
աերոպլանին...

— Աերոպլանին... —

Վորոշված եր:

«Աերոպլանին, աերոպլանին».
ու վողջ գյուղը՝ միաբերան՝
բաց ե արել բերանն իրա
իր ժողոված մալի վրա.
ու թռչում ե մաքով Մոսկով,
յետ ե դառնում շախով, շուքով:

Ի՛նչ տեր Բարսեղ,

ի՛նչ ճոռան սել.

աերոպլանին՝

վորոշված եր:

ՏԵՐ ԲԱՐՍԵՂԻ ՎԵՐՋԻՆ ՈՐԵՐԸ

Սասանա

Տեր Բարսեղը

խեղճ ու տգետ Մարտիրոսի

կովը որհնել, աղոթել ե
սրբերի հետ միասին...

Մարտիրոսի կովի կաթը
հազիվ բռնի ամիւ տակը.

աղոթել ե, աստվածածնով՝
կովի կաթը դառնա մի ծով.

պայմանով, վոր Մարտիրոսը
Տեր Բարսեղին վարձաարություն՝
տա մի կճուճ քաղցր մածուն:

Տեր Բարսեղը առոր-փառք
գնում ե տուն,

հետը տանում

մի մեծ կճուճ—լիբը մածուն.

ու գիշերը անհոգ քնում:

Ջահեխերը, հենց եղ գյուղի,

չարածճի,

Վորոշում են
եդ մածունը ծլկեցնել,
Մարտիրոսին նորից հանձնել:

Կես գիշերին
միասին

բարձրանում են Տեր Բարսեղի
տան կտուրը...

Ջահել մեկը

Վորոշում է լերթկից իջնել.

Վորովհետև նեղ եր տեղը՝

վճռում է հանել շորը:

Ապա ամուր թոկը կապում
մեջքին իրա,

իսկ մյուսը կամաց-կամաց

իջեցնում է կապվածին ցած:

Ստտում է ցած իջածը

մածունով լի մեծ կճուճը,

անում նշան, — քաշի թոկը, —

ու վերևից

ի պատասխան եդ նշանին,

ամբողջ ուժով,

կամաց-կամաց

բարձրացնում են նրան կուժով:

Մին ել հանկարծ

ես կճուճի խուսին անպիտան

մեծ աղմուկով

ընկնում է ցած...

Ես աղմուկի ձենի վրա

Տեր Բարսեղը ահալալած,

սև փարաջի մեջ փաթաթված,

դուրս է գալիս.

— Հարսն-հուրան, —

հավաքվում է գլուզն իր վրա:

Գյուղացիներ

մեծ ու փոքրով,

վորը փայտով,

վորը կացնով,

վորը փոցխով

կամ գերանդով...

— Հարսն, հուրան...:

— Ի՞նչ խաբարա...

— Ի՞նչ կա—չկա...

— Գող ա, գող ա...

Կտեր վրի ջահեխները

չեն շփոթվում.

արագ-գգուզ

թոկը կապում կտեր սյունին,

իրենք պահվում

կտրի շրթին...

Գյուղացիներ — շորս հինգ հոգի,

բարձրանում են կտեր գլխին

լերթկից նայում,
ի՞նչ են տեսնում.
ճերմակ մի բան՝
ողում միայն...

Իջնում են ցած

ու սարսափած
հայտնում գլուղին,
Տեր Բարսեղին ...

— Սատանա չե.—
վճռում է Տեր Բարսեղը,
պատվիրում է՝

— Դուան առաջ զիրքեր բռնեք,
պատրաստ կանգնեք.
գնամ չես ել
աղոթք անեմ՝
շարքը չքվի...

Հենց վոր դուան նա կհամնի,
ով ինչքան ուժ
թևում ունի՝
թող տա գլխին,
չինայի...

շուն կդառնա,
կատու կամ գալլ,
միք շփոթվի,
նա չե վոր կա...

Իսկ մտքումը մտածում է.

— Ե, մեր շունն է,
անպիտանը
ներս է մտել թաքուն-թաքուն,
կերել գուցե քաղցր մածուն.
կոտրել աման...
ի՞նչ իմանամ...

Դուրս կքշեմ նրան գեղից,
կհամոզեմ խավար գեղին,
թե սատանան ինքն էր, վոր կար,
մի շան դեմքով, պոչը չերկար:—

Տեր Բարսեղը
ներս է մտնում.
մառան համնում
ու ի՞նչ տեսնում,
ով սարսափ՝
մարդ...

Ու մինչ ուզում է դուրս փախչել,
մեր ջահելն է, հալին հասել,
կճուճը մեծ գցում գետին՝
Տեր Բարսեղի ուղիղ գլխին...
Շուռ է դալիս կճուճը,
Տեր Բարսեղի վրա թափվում
մածունը...

ու լեղաճաք դուրս է վազում,
շունչը կտրած...

Ու շտապեց լեկեղեցի:
Ենտեղ հասավ ճիշտ են ժամին,
չերբ տերտերը հայ-հավարին,
վոնդվելու լուրը առել,
մի բանի «սուրբ բան» հավաքել,

Թագցնում եր
փեշի տակը,
ծոց ու շեքեր...

Ռեհանը դուռը թակեց,
մեր տերտերը նախ ցնցվեց,
պատուհանից քիչ դուրս նայեց,
սրտապնդված դուռը բացեց.
— Ի՞նչ կա, վորդի, — «հայրն» հարցրեց.

— Ե, տերտեր ջան, աջիդ մեռնեմ,
վոտիդ տակի հողը լինեմ,
ինչ իմացա...

Անաստվածի աչքը դուրս գա,
բա լերեխիս յես վոր ծնեմ՝
ինչպես կնքեմ... —

— Յես ի՞նչ անեմ, յես գործ չունեմ,
պիտի գնամ, գլուխ չունեմ,
ինչ ուզում ես, են ել արա,
ել ձեր գեղում տերտեր չկա,
հայդա, հայդա... —

— Վայ, տերտեր ջան,
կարգիդ դուրբան,

յես մեղք չունեմ,
նրանցից չեմ,
մի բարկանա,
մի ճար արա... —

— Յես ճար չունեմ, յես գնում եմ.
գնա, գնա... —

— Բա ի՞նչ անեմ,

մի հատ վոսկի
քանի տարի պահել եյի,
հայ հավարի առա յեկա,
ասի, բալքի մի բան ըլի... —

Հենց վոր վոսկու ձեռն իմացավ,
մեր տերտերը մտքի ընկավ,
թե, վոնց անի, պիտի գնա,
բա եզ վոսկին թողնի գնա...

Մի քիչ կանգնեց,
քիչ մտածեց,
մեկ ել հանկարծ
խիստ սրբացած,
կանչեց.

— «Զը հավատ, քո կեցույց զքեզ».

առաջ աստված — զիջում եմ քեզ.
լավ, ներս արի, դուռը ծածկի,
եսպես...

սպասի...

ել ճար չկա, հիմի կնքենք.

փորդ եսպես դու դեմ արան,
յես ել ծեսը, ինչ վոր կարգն ա
լրիվ կանեմ,
կմկրտեմ...—

—Բայց եղ ինչպես...
Վոնց, տերտեր ջան,
բա յերեխան...

Ախր՛ր—ինչո՞վ... —

—Սո՛ւս,

ճար չկան, քեզ ասացի,
Պիտի կնքեմ յես

ԱՎԱՆՍՈՎ... —

Ամեն տեղ ել

եղ մողա չա.

ԱՎԱՆՍԸ կա,

ընդունված ա...—

—Վոնց թե ԱՎԱՆՍ.

ԱՎԱՆՍՆ ո՞վ ա... —

—Ե՛, Է, Է... —

Ձես իմանում... —

ես ՆՈՐ ՍՈՒՐԲ ա,

դու շուտ արա,

անունն ասա.

Ոհան,

Հովհան,

ինչ ես ուզում,

թե Ամբակում...—

—Վայ, տերտեր ջան, եղ տղա չա՞... —

Վայ, յես աղջիկ ելի ուզում...—

—Դե լավ, ասան, հը, աղջիկ ա,
անունն ասա.

Մարթան,

Մարիամ,

թե, Սոնա...—

—Ձե, տերտեր ջան, չե, Սոնիա...—

—Լավ, թող ինի թեկուզ Սոնիա...—

Ու կնքում ե ԱՎԱՆՍՈՎ,

միայն վոսկին՝

առնում

ՆԱՂԴՈՎ:

ՏԵՐ-ԲԱՐՍԵՂԻ ՎԵՐՋԸ

«ՏԵՐ ՀԱՅՐ»

Տեր Բարսեղը «սուրբ»

աչք ունեւր վաղուց հարս Հերիքնաղին,
վոր նորահարս եր—սիրուն ու նաշխուն.
խոստովանվելիս, թե ճաշակելիս՝
գնում եր ասես սրտիցը արուն:
Փնտուում եր առիթ, հարմար ժամանակ,
վոր սիրար «սերով» նաշխունին բանա,
գուցե թե նա չեւ «ենպեսը» լինի...
Գուցե թե մի պաշ տա...

Գուցե... տոնն թողնի...

Մի որ, որը նոր մոտ եր մթնելուն,
տերտերը կյոր գնում եր դեպ տուն.
կարճ ճամբան թողած—ջրհորով գնաց,
վոր ջրի չեկած հարս ու աղջկանց
մոտիկից նայի... ջերմ ու սրտալի
մի «վողջույն» ասի, 10 վողջույն աունի.
եղ բանը նրան շատ դուր եր գալի...
Ու...

Ո՛վ բախտ.

տեսավ՝ մեր Հերիքնաղին
ենտեղ միաջնակ ջուր ե լեցնում
իրեն սափորում...

Ու թիկ-թակ,

թիկ-թակ...

Որոր ու շորոր նրան մոտեցավ,
մորութից ժպտաց ու քիչ կռացավ,
ժպիտն չերեսին կամացուկ ասավ.

—Նայած սիրով, չարս դտա,
մութը ընկած—դեմս տեսա.
սիրտս իր առաջ չես բաց արի,
ասի չար ջան ինձ խնայի...

Ոնեղճ Հերիքնաղը ամոթից-վախից,
կառ-կարմիր կտրել, նայում եր վախով.
չեր հավատում թե «տեր հայրն» ե գյուղի՝
բարուն աղոթող, չարլ խավանող:
«Տեր հայրն» ավելի մոտիկ ե դայիս,
ձեռքերը կամաց դեպ նրան մեկնում,
նորից սկսում.

—Սիրուն կույս, սուս, մի վախենա,
ես ամենը մեր մեջ մնա,
ես սուրբ խաչը վկա կենա...
Միայն սուրբ կույս,
տուր ինձ դու հույս,

միայն մի պանչ, մկա չե խանչ...

Մի պանչ... մի պանչ...

Են ե, հասնում ե՞ փաթաթվի-պանչի,

խեղճ, Հերիքնազը ուշքի չե գալիս,

աւժերն հավաքում,

տերտերին հրում,

տերտերը եգտեղ իրեն կորցնում՝

ջրնորն ե ընկնում...




25 ч.

34769

665

ЭД.ХОДЖИК
ТЕР БАРСЕГ



АРМГИЗ · 1930 · ЭРИВАНЬ